

ման նահատակին Գրիգորի, զվարդապետեն Հայոց, եւ զնոցունց նմանեացն, որք զնոյն շաւիղ առողջմտութեանն հետեւեալ վարդապետեցին...² Յաղագս որոյ եւ զայլսն ամենայն եւ զորս առ նոսա արանցն՝ ծառայք նորա ունին զամենայն գրեալսն³, զԱրիոսի Աղեքսանդրացւոյ եւ զԱպողինարոսի Լաւողիկեցւոյ⁴, եւ զՆեստորի զԱնտիոքացւոյ, եւ զԵւտիֆեայ Կոստանդինուպալսեցւոյ⁵, եւ զԿումբրիկայ ստրկի, որ եւ յետոյ Մանի զինքն անուանափոխեաց, ուստի եւ Մանիքեցիք կոչեցան աշակերտեալն նմա. եւ զայլոցն բազմաց զնոյնանման կորստեան ճանապարհին ուղեկցաց, զորս սուրբ կաթողիկէ եւ առաքելանման եկեղեցւոյ նզովեալ եւ արտաքս ընկեցեալ՝ յամենայնէ ի բաց եւ մեկուսացեալք ի յԱստուծոյ ⁶ուղղափառ ուխտեն, մինչեւ ցայսաւր վարին ներկեալք իւրաքանչիւր ախտիւ⁷, անծածուկքն միմեանց, եւ յայտնի են ամենայն ուղղափառ ժողովրդոց:

80 Եւ արդ՝ թեպէտ եւ գթեալ սոքա անբժշկութեամբ կաղան ի հաւատն՝ այլ սակայն բանիւ⁸, եւ ոչ գործով. զի ըստ մարմնոյ պարկեշտութեան յամենայն ճգնութիւնս մի զմիով⁹ ելեւելս առնեն, եւ մանաւանդ ի կերակուրս եւ յըմպելիս¹⁰ եւ ի գիշութեան ժուժկալութիւնս. ¹¹Եւ զայս տեղեակ գիտեն յամեալքն ի Յոյնս:

81 Իսկ Հայոց աշխարհի աղանդ գոր ասեն՝ անանուն Է ըստ վարդապետի եւ անգիր ըստ բանի¹²: 82 Ի հաւատոյ եւ յուսմանէ տգետք երեւին, եւ ի գործս ծոյլք եւ անժոյժք. յորոց, ըստ անգիտութեանն որ Է ի նոսա, եւ անկարգ ըստ վարուց¹³՝ այդպիսի իսկ արդարեւ աղանդոց վայել էր բուսանել, ըստ յաւդուածոյ¹⁴ առասպելաբանութեանն, թէ «Ըստ խոզի հարսնացելոյ՝ կոյաջուր¹⁵ բաղանիք»: 83 Մի՛ արդարեւ պատմեցի այս ի Գէթ¹⁶, ըստ բանի

1 SS. զմերոյն

2 Եւթադրում ենք խօսքի պակասորդ:

3 ԲԳտ. զամենայն գրեալսն-ից յետոյ ունին ծնթ. «Պակասէ կամ խառնակեալ է բանն»:

4 ՁԱտ. զապողինարոսի զգատիկեցւոյ. այսպէս ըստ ուղղագրութեան ԲԳտ.

5 Ձ. կոստանդինուպոլսացւոյ

6 Ձ. ուղափառ... ուղափ.

7 SS. աղիտիւ. Ձ. աղխտիւ

8 Վ. սակի բանիւ

9 ՁՎԱտ. զմի միով

10 SS. ըմպելիս

11 SS. չիք եւ զայս տեղեակ... ի յոյնս. Վ. եւ զայս տեղեակք են յամեալքն ի յայնս

12 Ձ. ըստ բնի (պատուով)

13 ԲԳտ. ուղղագրել են ըստ անկարգ վարուց. Վ. եւ անկարգս վարուց

14 Ձ. յօդուածոց

15 Վ. ըստ խոզի՝ հուր, զնաւելոյ *կսծաջուր

16 Այսպէս ըստ ՁՎԲԳտ. Ատ. ուղղագրել է պատմեցի այս գէթ